ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2013թվականի N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 6-ի N15 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի Նոյեմբերի 7-ի թիվ 15 նիստի N 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2013թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <Տեղական Տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը :

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք գյուղական համայնքի
ավագանու 2013 թվականի նոյեմբերի 7-ի
թիվ 15 նիստի N 2-ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, նոր շենքերի շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանում է՝

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յուրաքանչյուրը 15.0 հազ / տաս հազար / դրամ :

Սույն կետով չնախատեսված օբյեկտների համար 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերաս ունեցող օբյեկտների համար՝մինչև 25.0հազ/քսանհինգ հազար/ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծով

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական փոփոխություն յուրաքանչյուրը 3.0 հազ / երեք հազար / դրամ:

3. Համայնքի վարչական տարածում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուրը 5.0 հազ. / հինգ հազար/ դրամ

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0հազ /հինգ հազար/ դրամ :

2) Օխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0 հազ/ հինգ հազար / դրամ :

5.Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.0 հազ / հարյուր յոթանասուն հազր / դրամ

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է

1) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 / հազար հինգ հարյուր / դրամ :

7.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2.0 հազ. / երկու հազար/ դրամ.

8.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությաունների դիմաց փոխհատուցման վճար 2.0 հազ. / երկու հազար / դրամ:

9.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 5.0 հազ./ հինգ հազար / դրամ: